



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.


ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1889

ԹԻԻ 10

ԹԱՍՄԱՆՈՒ

“Թամանիա,” կ’ըսէ զայն այցելող անձ մը, “Աւստրալիական գաղթականութեանց ամենէն փոքրն է, և գեղեցիկ տեսարաններու սիրահար մը կը կոչէ զայն յիշեալ գաղթականութեանց ամենէն գեղեցիկը : Թամանիա լեռներու և ջրհեղեղի երկիր է մշտնջենաւոր կապոյտ երկիրքով և իտալական կլիմայով.” Կը կարծուի թէ Թամանիա առաջ կից էր Աւստրալիոյ . բայց հիմա բաժնուած է անկէ Պասի Ջրանցով, որոյ մէկ եզրէն միւսը քանի մը ժամերու մէջ կ’անցնին շոգ ենաւք : Իւր գեղեցիկ տեսարանին և առողջարար կլիմային համար հարուստ Աւստրալիացիք հոն շատ կ’երթան ինչպէս հարուստ Եւրոպացիք սովոր են երթալ Ջուրիցերիա : Թամանիոյ լեռներուն ամենէն բարձր կատարը աւելի քան 5,000 ոտք է . կը գտնուին նաև մեծ լիճեր կղզոյն ներսերը :



ԼԱՆՍԹՆ

Այս կղզին կը կոչուի Հոլանտացի Թամանն նաւաւորին անունով որ գտաւ զայն 1642ին : Քիչ մը մեծ է Յունաստանէ, բայց բնակչաց թիւը Յունաստանի բնակչաց թուոյն մէկ տասներորդէն աւելի քիչ պակաս է : Անգղիացւոց ձեռքն անցաւ 1803ին, որք շուտ ետքը յանցաւորները արքորելու տեղ ըրին զայն : Այդ ատեն հոն կը գտնուէին 3,000 է մինչև 4,000 բնիկ ժողովուրդ, որոց և գաղթականաց մէջտեղ կուրներն անպակաս եղան . և 1830ին գաղթականք սկսան կանոնաւոր պատերազմ ընել անոնց հետ զանոնք ջնջելու աստիճան : Բնիկներէն շատ քիչեր ողջ մնացին, և տարուեցան մտաք գտնուող կղզի մը, ուր մեռան շուտով . և այսպէս բնիկ ցեղը իսպառ բնաջինջ եղաւ 1872ին :

Վերջին յանցաւորները Թամանիա տարուեցան 1851ին : Այդ ժամանակ Բրիտանական կառավարութիւնը կը ծախսէր օրը հազար Անգղիական ոսկի բանտերու և պահապան դիւնորաց համար : Այդ ատենէն հետէ տակաւ բարւոքած է բնակչաց բարքը և վարքը, և քանի մը տարիներէն ետքը պիտի չմնայ բան մը որ յիշեցունէ մարդուս թէ այսպիսի գեղեցիկ կղզի մը ժամանակաւ կը գործածուէր այնպիսի անհասնոյ նպատակի մը համար : Թամանիոյ գլխաւոր քաղաքն է Հոպարթ, և երկրորդը՝ Լանսթըն, որոյ պատկերը կը գնենք հոս : Շատ գեղեցիկ քաղաք է Լանսթըն, և շինուած է

հոն ուր հիւսիսային էսք և հարաւային էսք կը միանան կազմել Թամոր գետը : Թամորի վրայ կը նաւարկուի մինչև Լանսթըն, և շոգ ենաւք Մելպորնէ հոն կը հասնին 20 ժամէն Լանսթըն Հոպարթի հետ կը կցուի 130 մղոն երկայնութեամբ երկաթուղեաւ մը : Թամանիոյ միւս պատկերը որ կը գտնուի յաճորդ երեսին վրայ, կը խօսի ինք իրեն համար : Տարակոյս չունիմ թէ երբ նայինք անոր վրայ, զօրաւոր փափաք մը պիտի զգանք տեսնել բուն իսկ տեղը, և միանայ բնկերանայ այդ խումբին հետ որ կը նաւարկեն թի քաջելով զառի վեր բարձրացած ժայռերուն մէջտեղէն :






ՏԵՍԱՐԱՆ ԹԱՄԲԱՆՈՑ ՄԷՋ

որով պատուաւոր
դիրք մը ստանայ :
Դուք ալ ձերն ու
նիք :

Բայց նայեցէք որ
գործը գործիքին
յարմար ըլլայ : Լոկ
գործին ձեզի հա-
ճոյական և հրա-
պուրիչ թուիլընը :

չան չէ թէ այն յարմար է ձեր կարողութեանց :
Թէպէտ փառասէր և հպարտ ըլլաք՝ սակայն
չէք կրնար սանդղէ մը վեր ելլել առանց ոտից
և ձեռաց : Ծանօթացէք ձեր ոտից և ձեռաց
ոյժին , գտէք շտակ սանդուղը , և յետ այնորիկ
ապականեցէք միայն Աստուծոյ և ձեր անձին՝
դէպ ի վեր ելլելու համար :



ԳՈՑ ԲԵՐԱՆ

Շատ տղաք յիմարական բաներ կը խօսին ,
և չեն կրնար թողուլ այդ ունակութիւնը մինչև
անգամ երբ մեծնան չափահաս ըլլան : Երբ
մարդ կը խօսի յիմարական , անպատեհ և տղէտ
խօսքեր , ծաղր կ'ըլլայ կամ յանդիմանութիւն

կը լսէ : Շատ մարդիկ ապրած են աշ-
խարհիս մէջ շատ քիչ ներդրութիւն կրե-
լով , վասն զի իրենց բերնէն վայելուչ
խօսքեր կը հանէին . և շատեր իմաս-
տունի համբաւ ստացած են իրենց լեզ-
ուին սանձ դնելով , մինչ ուրիշներ ի-
րենց բարի համբաւը կորսնցուցած
են շատ խօսելով :

Լեզուն սանձելու և բերանը գոց պա-
հելու կարողութիւնն ինքնին փոքր նշան
չէ արժանաւոր անձի : Այն մարդը որ
կարող է սանձել իւր լեզուն , կարող
է սանձել իւր բոլոր մարմինը . և այն
մարդը որ չկրնար բռնել իւր լեզուն ,
չկրնար կառավարել ինքզինք , և խա-
ղալիկ է պարագաներուն և դէպքե-
րուն ձեռքը : Այն մարդը որ կրնայ
հանդարտ կենալ նախատուած , ծաղ-
րուած և զրպարտուած ժամանակը ,
և բան մը չըսել , այլ կը համբերէ և
պատասխան չտար , այնպիսի մարդ է որ
հաւանականապէս յաղթող պիտի ելլէ ,
մինչ անոր վրայ յարձակողները և զնա
նախատողները պիտի աճնան և խայ-
տառակուին : Սորվինք ըլլալ հան-
դարտ , վարժուինք կառավարել մեր
կիրքերը , կառավարել մեր լեզուները ,
և այն ատեն աւելի քիչ բաներ պիտի
կենան զորոնք յիշած ժամանակ ամբշ-
նանք և ցաւինք . և երբ կը խօսինք ,
մեր խօսքերը կարևոր պիտի համար-
ուին , և պիտի ըլլան առարկայ ուրիշ
անձանց մտադրութեանն և յարգա-
նաց :



բեմն բարեպաշտ հայր մը և մայր մը
մեծ փափաքով կը յուսան թէ ի-
րենց որդին ինքզինք պիտի նուիրէ
քարոզչական պաշտօնին . և տղան ,
որպէս զի իւր ծնողքը յուսաբեկ չըլ-
լան , կ'ըլլայ քարոզիչ , բայց առանց
ունենալու այդ պաշտօնին ոչ յարմա-
րութիւն և ոչ ճշմարիտ փափաք : Այս-
պիսի պարագայից մէջ պատանին սխալ
կ'ընէ , վասն զի չունի քիչ մը խորհիւ
և ինամով չքններ իւր բնական կա-
րողութիւնները :

Կը գտնուին այս օր բիւրաւոր տղաք
որ ի մօտոյ պարտին ընտրութիւն ընել
թէ ինչ պաշտօնի կամ արհեստի մըտ-
նելու են . սա է մին ամենէն ծանրա-
կշիռ երկրաւոր ինքզինքներէն որ պիտի
դրուին անոնց առջև : Տղաք , մի ա-
ճապարէք : Մի թողուք որ դէպք մը
որոշէ թէ ինչ գործի կամ պաշտօնի
զբաղելու էք ձեր ապագայ կեանքին
մէջ : Մի ընտրէք գործ մը՝ ուրիշ գոր-
ծերէն աւելի պատուաւոր ըլլալուն
համար : Մարդն է որ պատուաւոր
կ'ընէ իւր գործը ինչպէս իւր հանդերձ-
ները : Մի խորհիւք թէ որովհետև դըպ-
րոցին մէջ սրամիտ չէիք համարուեր ,
ձեզի համար պատուաւոր պաշտօն
չկայ աշխարհիս մէջ : Կան տաղանդ-
ներ և կարողութիւնք որ դիրքերու
հետ գործ չունին : Աստուած՝ մարդ
մը անգամ չըրկեր աշխարհ առանց
պատրաստելու անոր համար գործ մը

ԳՈՐԾԻ ԿԱՄ ՊԱՇՏՕՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Տղայ մը իւր կենաց մէջ զբաղելու
գործ մը ընտրելու մասին շատ անգամ
ազդեցութիւն կ'ընդունի դիպուածէ
մը կամ չնչին շարժառիթէ մը : Իւր
հայրը կամ հաւր դիցուք թէ էին յա-
ջողակ բժիշկ , կամ ձեռագէտ , կամ
մապաճառ , և կը թուի բնական և
ուղիղ որ նա անոնց քայլերուն հետեւի :
Կամ անոր մէկ մտերիմ բարեկամը
ուսուցիչ ըլլալու կը պատրաստուի , և
ինքն ալ պէտք է որ նոյնն ընէ : Եր-

ԼԻՒՍԵՐՆ

Զուիցերիոյ գեղեցիկ շատ մը տեղերուն ամենէն գեղեցիկներէն մին է Լիւսէրն լիճը: Լիւսէրն քաղաքն է յիշեալ լճին հիւսիսային արևմտեան ծայրը, և շինուած է Ռիւս գետոյն երկու կողմանց վրայ: Այս գետոյ շուրջը ուժգին վազելով կը թափին Հոսենոս գետոյն մէջ: Գետոյն վրայ ձգուած կամուրջներէն երկուքը շատ հին ժամանակի շէնք են: Անոնց վրայ ծածք կայ և մասամբ պարփակուած են, և ներսի կողմերը զարդարուած են նկարներով որոցմէ ոմանք կը ներկայացունեն Զուիցերիոյ պատմութեան վերաբերեալ դէպքեր: Քաղաքին հին եկեղեցոյն մէջ կայ շատ ընտիր երգչհոն մը, զոր ըսելու հաճոյքն ունեցանք ասկէ քանի մը տարի առաջ: Հանճարեղ երգիւնահարի մը ճարտար մասներուն տակը երբեմն քաղցրաբար կը գեղեցիկ թուչնոյ մը դայլայիկին պէս, և երբեմն կը սարսեր ամբողջ շէնքը որտաձայն թնդիւնով:

Լիւսէրնի ամենէն նշանաւոր առարկաներէն մին է առաջիկայ պատկերին մէջ ներկայացուածը: Այն է յիշատակարանն այն Զուիցերական հաւատարիմ պահապան գունդին որ ինկաւ 1792, Օգոստ. 10ին, մինչ կը ջանար պաշտպանել Փարիզի թիւյրբի պալատը յարձակմանց դէմ: Յիշատակարանը կը ներկայացունէ վիթխարի առիւծ մը որ կը մեռնի իւր ընդունած վէրքերէն, և կը ջանայ մինչև անգամ իւր մահուան տագնապներուն մէջ պաշտպանել վահան մը որ կը կրէ Գաղիոյ արքայական գերդաստանին զինանշանները: Այս «յարմարագոյն և սրտաշարժ յիշատակարանը» ընդօրինակուեցաւ թորովալասէնի, Տանիմարքացի հուշակաւոր անդրիագործին, մէկ հրաշակերտէն:

ՓՈՒՔՐԻԿ ՏՂԻՆ ՀՆՌԿԱԶԱՒԸ

Տր. ճորճ Ֆ. Շրէյտի, Նիւ Եորքի երևելի բժիշկը և վիրաբոյժը, անգամ մը կը գտնուէր գիւղը՝ քիչ մը հանգիստ առնելու և կազդուրուելու համար: Օր մը մինչ կը պտըտէր, տեսաւ հիւանդ երևոյթով իբր ութ տարեկան տղայ մը որ նստած էր ճամբուն քովը: Տղին մտքը կը գտնուէր քաղցր գէժքով ծերունի տիկին մը զոր անոք վրայ կը նստէր կարեկցութեամբ: Տղան կը կոչէր զնա «Մեծ մայր»: Բնազարգավարութեամբ իւր գլխովը հանելով տղան բարեւց տղային: Եւ իւր փոքրիկ աժգոյն և խորշովեալ երեսը զուար-

թացաւ երբ օտարականը քանի մը մարդասիրական խօսքեր ըսաւ: Մէկ երկու օր ետքը տղային ըսուեցաւ թէ ծերունի տիկին մը և փոքրիկ տղայ մը կ'ուզէին տեսնել զնա: «Չկրցի ես կեցունել զնա դայէն», ըսաւ կինը: «Կրկին և կրկին կ'ըսէ, այն տոնէն ի վեր որ տեսաւ ձեզ, թէ կրնաք աւողջացունել զինք ուրիշ տղոց պէս: Չիս հանգիստ չթողոյց գիշեր ցերեկ, և ես ահա համարձակեցայ բերել զնա ձեզի որպէս զի բժշկուի:»

«Երբունի տիկին» և իւր փոքրիկ թուան հաւատքը այնպէս սրտաշարժ էր, կ'ըսէ տղային, «որ ես որոյնցի ամէն ջան ի գործ դնել զնա բժշկելու համար, և ժամանակ ետքը փոքրիկ տղան կարող եղաւ վազվազելու լաւ մը զօրացած ըլլալով իւր ընկե-



ՅԵՆԱՍԱՐԻՄ Ի ԶՈՒՅՐԻՄ

րաց պէս:» Իբր տարի մը ետքը վանդակ մը յանձնուեցաւ Նիւ Եորք քաղաքին մէջ Տր. Շրէյտիի տունը: Վանդակին մէջ կը գտնուէր հնդկահաւ մը, և փոքրիկ տոմսակ մը մանկական ձեռքով գրուած այսպէս:

«Սիրելի Տղայ, այս է այն տղէն որ դուք աւողջացուցիք, գիտեմ որ հնդկահաւը պզտիկ է և մատղաշ, ինչու որ հաւկթէն ելլելէն ի վեր ես մեծցուցի զանի:»

«Իս շատ անգամ նուէրներ ընդունած եմ երախտագէտ հիւանդներէ որք իմ ձեռքովս բժշկուած են», ըսաւ տղային, «բայց ընաւ աւելի շարժած չէ սիրտս նուէր ընդունած ժամանակ քան որչափ երբ այն փոքրիկ գեղջուկ տղին հնդկահաւը ընդունեցի կոչա փոքր վանդակովը:»

Այսպէս նաև մեր երկրաւոր Հօր ամենէն հաճելի բաները չեն մեծ բաները որ կրնանք ընել: Այն որքանի կնոջ լուսն աւելի արժէք ունէր քան

հարուստին գանձերը, և յօժար սրտով կատարուած բան մը թէպէտ փոքրիկ, միշտ ամենէն աւելի ընդունելի է Տէրոջը: Աւա՛ղ որ շատ անգամ զանց կ'ընենք կատարել փոքր բաներ:

ԵՐԿՈՒ ԱՂՈՒԵՍՆԵՐՈՒ ԽՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ
Չոյգ մը կարմիր աղուէսներ Ամերիկա, Տարթայի ազարակներէն միոյն մէջ բնակեցան 1888ի գարնան մէջ: Յորենի արտի մը վրայ բլրակի մը մէջ քանի մը ծակեր փորեցին, և շատ չանցած չորս ձագեր ունեցան: Ամէն օր մինչ արտին մէջ կը փորէի և ցորեն կը ցանէի, կ'ըսէ այն արտին տէրը, կը տեսնէի այն երկու ծեր աղուէսները որ կը պառկէին փոքրիկ բլրակին վրայ իրենց որջին դիմացը: Չագերը կը թաւալէին արևին մէջ, կը խաղային իրենց ծնողաց թաւամաղ ագիւնըուն հետ, և կը զբօսնուին իրարու հետ ինչպէս կատուի ձագերու խումբ մը:

Առաւօտ մը դարցի մը եկաւ այն արտին կից արտը՝ իւր հետ բերելով շուն մը. և շունը իւր սեռին յատուկ բոլոր հետաքրքրութեամբ շուտով սկսաւ հետազօտել երկու արտերն ար Շունը մինչ տակաւին շատ հեռի կը գրտնուէր աղուեսուց որջէն, լսեցի սուր և ազդարարող հայիւն մը, և տեսայ որ աղուեսուց ձագերը աներեւութացած էին: Երբ նայեցայ, ահա մայր աղուէսը կը պառկէր բլրակին վրայ, ականջները տնկած, քիթը գետնին վրայ և ինք աչք ու ականջ կտրած: Բնտանիքին հայրը իւր խոշոր ագիւն շարժելով հովին առջև, կ'երթար շան կողմը: Կրնար նպատակ ունենալ շան վրայ յարձակելու: Զարմանքով կը մտածէի: Ես ընաւ չէի լսած այսպիսի բան մը. և շունը թէպէտ չէր մեծ, սակայն տակաւին մեծ էր աղուէսէն: Բայց աղուէսը իւր ընելիքը աղէկ գիտէր քան որչափ ես: Մօտեցաւ շանը, մինչև որ սա տեսաւ զնա. այն ատեն երկուքն ալ կեցան վայրկեան մը անշարժ, յետոյ շունը աղուէսին ետեւէն ինկաւ: Աղուէսը արհամարհոտ հայիւնով մը դարձաւ իւր որջէն հեռու կողմ մը: Ի սկզբան թուեցաւ թէ շունը շուտով պիտի հասնէր աղուէսին, բայց դիտեցի որ անոք գրեթէ մղոն մը հեռանալէ ետքը աներեւոյթ եղան դաշտագետնին խոտերուն մէջ, և հետեցուցի թէ աղուէսը կարող եղաւ ազատուիլ շան ձեռքէն: Իբր ժամ մը

եւորը շունը ետ գարձաւ իւր ապար-
դիւն աշխատութենէն. և ժամանակ մը
հանգարած հետեւեցաւ իւր տիրոջ: Յե-
տոյ դարձեալ սկսաւ պտրտիլ հետա-
զօտելով առգին անդին:

Այս միջոցին մայր աղուէսը մնացած էր
իւր տեղը, և կը ներկայացունէր հան-
դարտ հսկողութեան օրինակ մը. բայց
հիմա երբ շունը դարձեալ համարձակե-
ցաւ մօտ գալ, ելաւ վագեց գէպի նա,
և շունը շուտով սկսաւ հալածել աղուէ-
սը դաշտագետնին վրայ: Հագիւ ա-
տնը աներևոյթ եղան, ահա արու ա-
ղուէսը ետ եկաւ իւր պահուրտած մէկ
տեղէն, և իւր ընկերոջ պարապ թո-
ղած գիրքը գրաւեց: Շունը ետ դար-
ձաւ ժամանակէ մը ետքը՝ անյաջող ե-
լած ինչպէս առաջ: Յերեկը կրկին և
կրկին փորձուեցաւ հալածել աղուէս-
ները, նախ արուն և յետոյ՝ էգը. և
մինչ մին կ'աշխատցունէր զնա՝ միւսը
կը հսկէր ձագերուն վրայ, որք այլ ևս
աչքի չէին երևեր շանը առաջին ան-
գամ երևան ելլելէն հետէ:

Դժուար է ըսել թէ մենք ինչի վրայ
աւելի կը զմայլէինք. աղուէսներուն
քաջութեանը վրայ՝ որ ասպարէզ կը
կարգային շանը անոր հետ մրցման
մասնելու համար, որ ատեն եթէ բռ-
նուէին անկէ, կը սպաննուէին. անոնց
հանճարին վրայ՝ որով փոփոխակի կ'ել-
լին ասպարէզ, այնպէս որ երկուքն
ալ հանգչած ըլլային երբ հալածուէին.
անոնց հնարագիտութեան վրայ՝ որով
իրենց ձագերէն հեռի կ'առաջնորդէին
շունը, թէ անոնց ճարտարութեանը
վրայ՝ որով անյայտ կ'ըլլային շան ա-
չուրներէն երբ նա բաւական հեռա-
ցած կ'ըլլար իրենց որջէն:

ՁՐՀԱՆ ՔԱՇԵԼ ԿԵԱՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄՐԱՐ

Ամառ-էրտամի հին բանտերէն միոյն
մէջ կար սենեակ մը ուր կը պատ-
ժուէին ծոյլ բանտարկեալները: Այս
սենեակին մէկ անկիւնը կը գտնուէր
ջրհան մը, և ուրիշ անկիւն մը՝ ծակ
մը որոյ մէջէն շարունակ ջուր կու գար
ներս: Բանտարկեալին թողուած էր
ընտրել կամ անգործ կանգնիլ մինչև
որ խեղդուէր ջրին մէջ, և կամ ջրհան
քաշել և չթողուլ որ ջուրը շատնար
բարձրանար, և այսպէս իւր կեանքը
պահպանուէր: Այս կը շարունակուէր
մինչև որ բանտապետն ուզէր աղա-
տել զնա:

Ինձ կը թուի թէ բոլոր Հողանտայի
մէջ բնութիւնը աւելի ընդարձակ կեր-
պով կը ներկայացունէ այս փոքրիկ
օրինակը: Հողանտացիք միշտ ստիպ-

ուած են ջրհան քաշել նոյն իսկ իրենց
գոյութիւնը պահպանելու համար, և
հաւանականապէս պարտին շարունակ
ընել այդպէս մինչև ի կատարած աշ-
խարհի:

Կ'ըսուի թէ Հողանտայի մէջ գէթ
ինը հազար ինը հարիւր հողմաղաց
(եւէ Կեյօնի) կայ ութսուն մինչև հար-
իւր քսան ոտք երկայնութեամբ առա-
գաստներով: Հողմաղացք կը գործած-
ուին ատաղձ սողոցելու, քթան ծեծե-
լու, ցորեն աղալու և ուրիշ շատ մը
տեսակ գործերու: Բայց գլխաւորա-
պէս կը գործածուին ջրհաններ բանե-
ցունելու, և այսպէս ցած գետիննե-
րու ջուրերը ջրանցներուն մէջ թափե-
լու, և երկիրը ողողումներէ զերծ պա-
հելու: Կ'ըսուի թէ անոնց տարեկան
ծախքն է իւր երկու միլիոն Անգլիա-
կան օսկի: Մեծերը ահագին ոյժ ու-
նին:



ԵՆԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆԵԱՅ ՄԷՋ

Հեղինակ մը բնական պատմութեան
վրայ գրած իւր գիրքերէն մէկուն մէջ
քանի մը յոյժ հետաքրքրալարծ բա-
նէր կը պատմէ կենդանեաց և մաս-
նաւորապէս ձկանց երկտարականու-
թեան վրայ: Անգամ մը փորձեր ը-
րաւ Ափրիկէի երկտարական կատու-ձը-
կան վրայ, և գտաւ որ այն կրնար
տալ շատ զգալի երեկտարական ցնցում,
թէպէտ միջակ հաշուով հազիւ վեց
մատնաչափ երկայնութիւն ունէր: Այս
ձուկը աղէկ ծանօթ է Հիւսիսային Ափ-
րիկէի գրեթէ բոլոր գետերուն մէջ:
Յիշեալ հեղինակը կ'ըսէ նաև.

Հին Բայապար գետոյն եզերքը բնա-
կող բնիկները զանոնք շատ անգամ
կը գործածեն շատ հետաքրքրական
նպատակներու: Երբ մէկը հիւանդու-
թենէ մը բռնուի, կը դնեն զնա ջուր
պարունակող դոյլի մը մէջ կամ ուրիշ
ամանի մը մէջ ուր այս ձուկերէն քանի
մը հատ կը լողան, սա համազմայթ թէ
հիւանդը պիտի զորանայ հոն գտնուած
անձանօթ «բանէ մը»: Այս կը ցուցնէ
թէ երկտարականութեամբ բժշկութիւ-
նը առաջին անգամ Ամերիկա ծագում
չէ առած: Բայց այս կատու-ձուկը
ամենէն աւելի կը գործածուի ման-
կանց համար. վասն զի Ափրիկեցի մայ-
րեր կը համարին թէ իրենց զաւակ-
ները առողջ և զօրաւոր կ'ըլլան եթէ
յուանան այն ջուրին մէջ ուր գտնուած
է այս ձուկէն: Ոմանք իրենց զաւակ-
ները կը դնեն ամէն օր դոյլի մը մէջ
երկտարական փոքրիկ ձկան հետ, և
կը ստիպեն զանոնք որ խաղան անոր
հետը, հաւատարմով թէ այսպէս ընե-
լով անոնք պիտի ըլլան զօրաւոր մար-
դիկ: Որովհետև տասնուհինգ մատ-
նաչափ երկայնութեամբ և իւր բնիկ
ջրէն նոր հանուած ձուկ մը կրնայ ե-
րկտարական զօրաւոր ցնցում տալ, ա-

նոր հետ ջրին մէջ դրուած մանուկը
կ'ըսուի թէ բարձրաձայն կու լայ կը
ճչէ:

Կը պատմուի թէ կը գտնուին երեկ-
տարական միջատներ ալ: Բրիտանական
նաւատորմին ծառայողներէն՝ հրամա-
նատար Պէյնէ, կ'ըսէ թէ երբ Հարա-
ւային Ամերիկայի անտառաց մէջ խո-
չոր թրթուր մը առաւ իւր ձեռքը,
այնպիսի զօրաւոր ցնցում մը ընդու-
նեց որ իւր աջ կողմը և բազուկը գրե-
թէ անդամալոյծ եղան, և մինչև ան-
գամ վասնզի ենթակայ եղաւ իւր
կեանքը: Կայ տեսակ մը մուկ որ-
մէ ցնցում մը ընդունեց վերոյիշեալ
նաւատորմին հրամանատարներէն Մր-
Տէյվիս, որոյ բազուկը մինչև արմուկը
թմրեցաւ, և երբ միջատը առնուե-
ցաւ իւր ափէն, անոր վրայ տեսնուե-
ցան տարօրինակ նշաններ:

ԳՐՈՒԱԾ ՄԵ ՋՐԻ ՄԷՋ ՊԱՀԵԼ ԱՌԱՆՅ ԵՂՇՈՒԵԼՈՒ

Բաւական հաստատուն և տոկուն թղթի
մը վրայ խօսք մը գրեցէք. օրինակի հա-
մար, «Գրուած մը ջրի մէջ պահել առանց
եղծուելու.» Ապա թուղթը լոյծ մեղրա-
մամի մէջ մէկ քանի երկվայրկեան թողէ
եւքը հանեցէք և վրան փակած մեղրա-
մամը դանակով մը քերեցէք: Ջրով լե-
ցուն քրակի մը մէջ դրէք թուղթը, և
զարմանօք պիտի տեսնէք թէ գրուածն
երկար ատեն ջրին մէջ կը մնայ առանց
եղծուելու:

Ն. Յ. ԳԱՍՍՊԵԱՆ



ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Օգոստոս ամսոյ թուարանական հանե-
լուկին ուղիղ չորս պատասխաններ ընդու-
նած ենք. երկուք՝ Թուրքերէն և երկուք՝
Հայերէն: Պատասխանողք են,

- Թալաս. — Կարապետ Գ. Ե. Բերտոլէտեան
- Պուրտուր. — Հաննէ Յարութիւնեան
- Օրտու. — Փայլածու Յ. Անմահեան
- Կէմէրէք. — Միխայ Զ. Կարապետեան

Թուրքերէն պատասխաններէն միոյն կեր-
պը լաւագոյն թուելով կը դնենք զայն թէ-
պէտ ոչ ճիշդ գրուածին պէս.

Կանանց մին պէտք էր ընդունէր $\frac{1}{2}$ և
միւսը $\frac{1}{3}$ տոլար մէն մի վառեակի համար:
Ուստի իւրաքանչիւր կնոջ վառեակներէն
մէկ մէկ հատ առնուելով, անոնք մէն մի
զոյգի համար պիտի ընդունէին $\frac{1}{2} + \frac{1}{3} = \frac{5}{6}$
տոլար, և մէն մի վառեակի համար $\frac{5}{6}$ կն
 $\frac{1}{2}$ ը, որ է $\frac{1}{3}$: Բայց վաճառականը ուզեց
միայն $\frac{2}{3}$ տոլար վճարել մէն մի վառեակի
համար. և այսպէս կանայք պիտի կոր-
սրնցունէին $\frac{5}{6} - \frac{2}{3} = \frac{5}{6} - \frac{4}{6} = \frac{1}{6}$ տոլար
մէկ վառեակէն: Ուրեմն 60 վառեակնե-
րէն պիտի կորսնցունէին $60 \times \frac{1}{6} = 10 = 1$
տոլար:

Ամերիկայի Միեմինսոյք երկրութեան կողմէն,
Պատմաբան Յ. Ք. ԿԻՆ
Տնօրէն և խմբագիր Զ. Ս. ՊԱՐՆԸՍ
Ֆինանսաբանական Ս. Ամերիկա Իսթ
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՅՈՒՐԱՆՈՒ Ա. ՅԱՌՈՐ ԳՈՍՏԱՆԱՆ